ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով քսայուղերի և այլ յուղերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի

ք. Երևան 28 փետրվարի 2018 թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու Բացման Աշխատակազմ)
	Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Ս. Մելքոնյան)

Ընդունել ի գիտություն՝

• Հրավերով սահմանված կարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներից՝ «Արման-Օիլ-Մեկ» ՍՊ և «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊ ընկերություններից, պահանջվել են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը:

• Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հրավերով սահմանված ժամկետում ստացվել են մասնակիցներից պահանջվող փաստաթղթերը և հարցման վերաբերյալ եզրակացությունը:

1. Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց՝

1. Մասնակիցների՝ «Արման-Օիլ-Մեկ» ՍՊ և «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց:

Մասնակիցների որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

2. Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցների որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

3. Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

Մասնակիցների որակավորում «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

Գնահատման արդյունքներն ամփոփված են գնահատման թերթիկներում:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Արման-Օիլ-Մեկ» ՍՊ և «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊ ընկերությունների հայտերը գնահատել բավարար:
2. Ընտրված մասնակիցներ ճանաչել՝
   ա) 1 -ին և 2-րդ չափաբաժինների մասով «Արման-Օիլ-Մեկ» ՍՊԸ-ին,
   բ) 3-րդ չափաբաժնի մասով «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊԸ-ին:
3. Ընտրված մասնակիցներին անգործության ժամկետը լրանալուց հետո ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Ս. Մելքոնյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ չկնքվելու այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:15-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Մելքոնյան

Անդամներ՝ _____ Ա. Ջալադյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան